

## ՔԱՐՈՉԽՈՍԱԿԱՆ

### ՀՈՎՀՈՒԱԿԱՆ ԱՍՏՈՒՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Փ.

#### ՔԱՐՈՉԽՈՍՈՒԹԻՒՆԸ ՃԱՅԱՍՏԱՆԵՍԸՑ ԽԱԽՂԵՑԻՈՑ ՄԷՋ

1. Հայաստանեաց Նկեղեցւոյ առաջին, հարողիները . — Կը կարծուի թէ Թովմաս առաքեալ եղած է Աւետարանի լոյսը առաջին անգամ Հնդկաստանի մէջ տարածողը : Հնդկաստանի ինտոս կղզիներէն մէկուն մէջ կայ ժողովուրդ մը որ Թովմասեան կը կոչուի : Շատ հաւանական է Թովմաս առաքեալ Հնդկաստան գացած ատեն Հայաստան ալ եկած ու քարոզած ըլլայ Հայ ժողովուրդին : Նոյնպէս կը կարծուի թէ առաջին անգամ Պարսկաստանի մէջ Աւետարանին ճշմարտութիւնը քարոզողը եղած է Սիմոն առաքեալուր որ նախանձայոց ալ կը կոչուէր : Սյու առիթով Սիմոնին և Հայաստան հանդիպած ու քարոզած ըլլալը անհաւանական չի թուիր : Կրիսյա ըլլալ որ Յիսուսի աշակերտներէն ուրիշներ ալ Հայաստան այցելած ըլլան : Բայց և այնպէս Հայաստանի առաջին քարոզիչները կամ Լուսաւորիչները կը նկատուին Թագէոս և Բարթողովիմէոս առաքեալներ, որոնք Հայաստանի ժողովուրդին հետապրած, գործած և հոն ալ նահատակուած են, հաստատելու համար իրենց քարոզած ճշմարտութիւնները :

Որո՞նք էին Թագէոս և Բարթողիմէոս առաքեալներ : Ասոնք Յիսուսի լնտրած առաքեալներն էին, որոնք Հայաստանեաց Առաքելական Նկեղեցւոյ Կիմազիրները եղան, և ահա՝ այդ իսկ պատճառաւ նոյն Նկեղեցիին կողմէ կը կոչուին առաջին Լուսաւորիչները :

(+) Թագէոս՝ Յիսուսի տասներկու առաքեալներէն մին՝ (Մաֆ. Գ. 18) որ կը կոչուէր նաև Զիրիոս և Յուվա Յակոբեան (Մաքր. Ֆ. 3, Մաֆ. Գ. 18, Ղոմ. Զ. 16, Պորժ Ա. 13): Միևս առաքեալներուն պէս ունէր երկու անուն, Յուվա և Թագէոս: Յուվա՝ (ոչ իսկարիովտացի) (Յովի. Ֆ. 22)

իրեն բուն անունն էր, իսկ Թագէոսը իր մականունը: Ինքն էր Յուվայի անունը կրող Բնագհանրական Թուղթին հեղինակը:

(բ) Բարքողիմէոս՝ Նոյնպէս տասներկու առաքեալներէն մէկն էր, Գալիլիոյ Կահաքաղաքէն, և արհեստով ճկնորս: Այս ալ ունէր երկու անուն, Բարթողիմէոս և Նաթանայէլ: Առաջին երեք Աւետարանները դինքը կը յիշեն Բարթողիմէոս անունով, իսկ չորրորդ Աւետարանը Նաթանայէլ անունով կը ճանչնայ: Երեք Աւետարաններուն մէջ ալ իր անունը Փիլիպոսուն վերջը կը յիշուի, իսկ չորրորդ Աւետարանին մէջ Փիլիպոսուն է որ առաջին անգամ զինքը կ'առաջնորդէ Յիսուսի: Շատ հաւանական է Բարթողիմէոս իր ազգանունն էր, և Նաթանայէլ բուն անունը: Էստ չորրորդ Աւետարանի, ինքն էր առաջին անգամ Յիսուս Քրիստոսի աստուածութիւնը զաւանողը (Յովի. Ա. 49) որ կոչուեցաւ և Աննենք իսրայելացի մը (Յովի. Ա. 47):

Թագէոս և Բարթողիմէոս առաքեալներ երբ Հայաստան եկան որպէս աւետարանիներ, հոն հանդիպացն Հրեայ գաղթականներու, որոնք Հրէսատանէն եկած իրենց հայրենակիցներն էին, և որոնց միշոցաւ է որ կրցան գիւրութեամբ տարածել Աւետարանի Նոյսը Հայ ժողովուրդին մէջ: Նորահաւատ Հայեր իսկոյն հալածանքի ենթարկուեցան, և որուն արդիւնքը այն եղաւ որ Սանկուլիս կոյս, Թագէոս առաքեալ և ուրիշներ շատ չանցած նահատակուեցան: Նոյնպէս Բարթողիմէոս առաքեալ Հայաստանի մէջ նահատակութեան փառքին արժանանալով վերջացուց իր կեանքը իրը արդիւնք հալածանքներու, Սակայն այս երկու առաքեալներու և բազմաթիւ ուրիշ վկաններու մաստիրոսութեան չնորհիւ Քրիստոնէական կրօնին սերմերը անեցան, և հրմը գրին Հայ Քրիստոնէութեան Հայաստան Աշխարհին մէջ:

Ինչպէս ուրիշ առաքեալներ, նոյնպէս Թագէոս և Բարթողիմէոս կենաց Բանը կը քարոզէին պարզ ու դիւրահասկնալի ոնով հաւատագով ու սրտաբուղն արտայայտութեամբ: Իրենց քարոզելու մեթոսը ընդհանրապէս մեկնուղական էր: Հին Ուխտէն խօսք մը, դէպէ մը և կամ պարբերութիւն մը կ'առնէին, կը բացատրէին և ապա կոտային իրենց պատգամը, առաջնորդելու

համար ունկնդիրները Յիսուս Քրիստոսի միջոցաւ յայտնուած յաւիտենական ճըշտմարտութիւններու։

Այս երկու առաքեալները յաջողեցան իրենց առաքելութեան գործին մէջ, անոր համար որ կազումով ու նուիրմամբ մօտենցած էին իրենց աւետարանչական ու քառողջական պաշտօնին։

2. Լուսաւորիչ ուրակա բարովիչ։— Առաջին երեք հարիւր տարուան միջոցին Քրիստոնէութիւնը պահած էր իր գոյութիւնը Հայաստանի մէջ։ Ասիկա ցոյց կու տայ թէ Հայց։ Եկեղեցին Թագէուս և Բարողիմէոս առաքեալներու քարոզութեան ըրջանէն ակսեալ՝ մինչեւ Լուսաւորչի օրը, ունեցած է միշտ Եկեղեցականներ և քարոզիչնեցի Եւ այս քարոզիչներու աշխատութեան չնորհին էր որ Քրիստոնէութեան լոյսը անչէջ մնացած էր մեր երկրին մէջ, այս երեք հարիւր տարիներու լնիւացքին։ Այլապէս կարելի չէր որ Հայ ժողովուրդը, չորրորդ զարուն սկիզբը, Լուսաւորչի միջոցաւ, ազգովին ու ամբողջովին զարձի գար մէկ անգամէն։

Պատմութեան մէջ Գրիգորի անուան կցուած է Լուսաւորիչ տիտղոսը, տիտղոս մը որ իրաւամբ վայել է իրեն։ Որովհետեւ նա լոյս տարածած է, բատին լայն տառւմով, Հայաստանի մէջ։ Լուսաւորչին ըրածը ներքին աւետարանչական գործ մըն էր Հայութեան մէջ։ Որքան ալ գժնդակ ու ծանր, ան յօժարութեամբ կատարեց իր առաքելութեան վսիմ պաշտօնը, ամէն խոչնդուտ, հալածանք առ ոչինչ նկատելով, և մահուան սպանալիքներն իսկ արհամարհելով։

Լուսաւորիչ կեսարիոյ մէջ առած էր իր քրիստոնէական գաստիարակութիւնը, կը հաւատար Աստուծոյ գոյութեան, և պայծառ գիտակցութիւնը ունէր հոգեոր իրականութիւններու հանդէպ, ինչ որ էական պայման է քարոզիչը մը համար յաջողելու իր գործին մէջ։ Աստուծ իրեն համար զաղափար մը, այլ իրականութիւնն մը։ Աստուծմէկ կ'առնէր իր ներշնուրմը, ուժն ու ներքին եռանդը։ Եւ քանի որ Աստուծոյ հետ շիման մէջ էր միշտ, և եղած էր անոր նուիրուած մէկ պաշտօնեան ու գործակիցը, յաջողութիւնը ժամանեցաւ իրեն ամէն կերպով, և ուստի կրցաւ առաջնորդել Հայ ժողովուրդը գէպի Աւետարանի լոյսու։

Ահա՛ այս իսկ պատճառաւ, Լուսաւորիչ չորրորդ գարուն սկիզբը կարկառուն դէմք մըն է Հայ Եկեղեցւոյ քարոզչական բեմին վրայ։ Ագաթանգեղոս, Լուսաւորչի քարոզչական պաշտօնի մասին կ'ըսէ. և Անհանգիստ անդադար զցայդ և զցրեկ ոչ զադարեր երբեք. . . . խօսիլ, իրատել և ուսուցանել. . . . յատկապատում արարեալ ուսուցանէր ամեննեցուն։

Ագաթանգեղոսի այս վկայութիւնը ցոյց կուտայ թէ Լուսաւորչի քարոզիսուելու ձեւը շատ յասի էր, պարզ ու զիւրահակնալի։ Յիսուս Քրիստոսի քարոզախօսելու մեթոսն ալ պարզ էր։ Լուսաւորչի ինք ես, Թագէոսն և Բարթովիմէոսն առաքեալներու նման, հետեւ ըլլալով իր մեծ Վարդապետին, կը քարոզէր Հայ ժողովուրդին մէջ պարզ լեզուով ու զիւրահակնալի ոճով։ Մէկը որ մարդկութիւն տալիք պատճամ մը ունի և զիտակից է իր պաշտօնին, խրթին ու գրժանակնակից լեզուով արտայայտուելու չփորձուիր։

Մեծ քարոզիչներու յաջողութեան գաղտնիքը ընդհանրապէս պարզութեան, բնականութեան ու զիւրահակնալի բառերով քարոզելու մէջ կը կայանայի ։ Նոյնը շիտակ էր Գրիգորի համար որ Հայ ժողովուրդին Լուսաւորչի եղաւ իրաւամբ։

3. Ա. Մեսրոպի բարոզչական կեսարի։— Զորրորդ գարու մէջ Հայ քարոզիչներ, Լուսաւորչի շաւզին հետեւելով, Աստուծածաւածունչը կը կարդային, հայերէնին կը թարգմանէին և ապա կը բացատրէին ժողովուրդին օրուան հաօկնալի լեզուով։ Սանթամնէնիներ և կամ վերծանողներ կ'անուանուէին մեր նախնեաց կողմէ։ Սահակ-Մեսրոպի ձեռամբ, երբ հինգերորդ զարու մէջ Աստուծածունչը հայերէնի թարգմանուեցաւ, Հայ վերծանողներ սկսան ուղղակի հայերէն լեզուով կարգաւ, մեկնել և բացատրել կարդացուած համարներուն իմաստը։ Յետոյ Եկեղեցւոյ բարձրաստիճան կղերները ստանձնեցին քարոզչական պաշտօնը, որ կը բաղկանար մեկնութենէ, խրթութագածութենէ և գործնական խրատներէ։ Այսպէս Հայց։ Եկեղեցւոյ մէջ նուիրականացաւ քարոզ խօսելու գրութիւնը Հայ վերծանողներու և քարոզիչներու միջոցաւ։ Սուրբն Մեսրոպի քարոզչական գործը սահմանափակուած չէր Հայաստանի մէջ,

այլ մանաւանդ Վրաստանի մէջ իր ունեցած աւետարանչական աշքառու գործունէութիւնը կարեւոր տեղ մը կը գրաւէ իր քառզական պաշտօնին մէջ։

Մեսրոպի քարոզախօսելու մեթոսին նկատմամբ կը կարգանք հետևեալը և Կացեալ յանապատ և ի հովանաւոր տեղիսն, որ Շաղամքն անուանին, բովանդակեաց լրգվարդապետութիւնս առաջին առաքելոց խմբից։ Քանզի ո՞չ որպէս արուեստ ուսուցանէր, այլ իրբե զնոցի առաքելաբար աշակերտացն տայրու։ Մեսրոպ Մաշթօնի մասին գրուած, «Ոչ որպէս արուեստ ուսուցանէր» խօսքը կը վկայէ թէ Մեսրոպ ալ կը հետեւ իր նախնեաց քարոզախօսելու պարզ ձևին։

4. Գրիգոր Տաթեւացին եւ իր հարոզագիրը。— Գրիգոր Տաթեւացին ժԴ՝ գարու մէջ Յովհաննէս Օրոտնեցիի ձեռքին տակ ուսած՝ անոր նշանաւոր աշակերտներէն մինէր։ Հին ատեն քարոզներ մեծ մասամբ մեկնողական, ջատագովական, դաւանաբանական, վարդապետական ու խրատական էին։ Հայ մեկիներ ալ իրենց ժամանակի քոյր եկեղեցներու մեկնիչներուն նման Ս. Գրիգոր կը մեկնէին այլարանական մեթոսով։ Այս արաբանական մեթոսով քարոզել շատ ընդհանրացած էր մանաւանդ Միջին գարու մէջ։ Կարճ բնաբանով քարոզելու սովորութիւնը մշակուած է աւելի վերջին գարերու ընթացքին։

Տաթեւացին քարոզները ջատագովական ու վարդապետական (դաւանաբանական) էին առ հասարակ։

Գրիգոր Տաթեւացին, Օրմաննեանի կարծիքով, հմուտ էր լատիններէն լեզուի և լատին աստուածաբաններու սկզբանակեան սիրն, և կը պաշտպանէր Հայոց Եկեղեցւոյ ուղղափառութիւնը ճիշգ միմնոյն ձեռքով։ Տաթեւացին պայքարեցաւ միշտ Ռւնիթուն ներու ոտնձգութեանց գէմ և պաշտպանեց Հայ Եկեղեցին թէ իր խօսքով և թէ գրիչով։ Տաթեւացին ունի Հարցման զիրք անուն երկասիրութիւնը մը՝ զոր գրած է լատին աստուածաբաններու սկզբանակեան մեթոսով։ Օրմաննեան այս գրին համահաւասար արժէք կուռայ Միջին դարու մէջ նշանաւոր լատին աստուածաբաններու արտադրած գործերուն հետո։

Գրիգոր Տաթեւացին գրած է նաև քա-

րոզագիրք մը, որ երկու հատորներէ կը բաղկանայ, Ամառան ու Ձմեռան անուններով, ճոխացած վարդապետական տեսութիւններով, որոնք մեծ զարկ տուրին քարոզախօսելու արուեստը զարգացնելու համար Հայ ժողովուրդին մէջ։ Տաթեւացին յատուկ աշխատանք կը թափէր իր հասցուցած աշակերտները վարժեցնելու քարոզախօսութեան և բեմասացութեան ժամանակի պայմաններուն։ Ինք ըլլալով «Քաջ հուեսուել աստուածաբան վարդապետ»։ Տաթեւացին Ճայ ժողովուրդին համար հասցուց ոչ միայն կուսակրօն վարդապետներ, այլ նաև ուսեալ քահանայ քարոզիչներ, որոնք իրեն վարդապետութիւնները և ոգին տարածեցին ամէն ուրեք։

Աբրահամ Զամինեան, իր Հայոց Նկեղեցու պատմութիւն գրքին մէջ կ'ըսէ։ «Տաթեւացին միւս նշանաւոր գործն է քարոզագիրքը՝ երկու հատորի բաժնուած և Աւան և Ձմեռան, մօտ 200 քարոզներ՝ այլ և այլ նիւթերի մասին։ Այս քարոզների մէջ պարզ երեսում է ժամանակի սքոլաստիկ ուղղութիւնը, իւրաքանչիբ զաղափարաբաժնաւում է մանր գաղափարների և նրանց ճշմարտութիւններ ապացուցանելու համար բերուում են վկայութիւններ Ս. Գրիգի ու փիլոսոփաններից, յայպիսի հիւծ դասութիւններու պատճառաւ քարոզների մէջ չե երեսում զգացմունք, ոգեւորութիւնն, որ նրանց բնական յատանշինը պէտք է լինէր։ Բայց և այնպէս Տաթեւացին քարոզագիրք ժամանակի հայութամբ ուսումնասիրութեան համար կարող է մեզ նիւթ տալ»։

Տաթեւացին՝ ժԴ՝ գարու իրեւ նշանաւոր հայ քարոզիչ, քարոզեց շարունակի իր խօսքով և թէ գրիչով, և պաշտպանեց Հայ Եկեղեցին Ունիթուններու գէմ մեծ նախանձախնդրութեամբ, միաժամանակ տարածելով Աւետարանի կենսատու լոյսը Հայ ժողովուրդի տարբեր խաւերուն մէջ։

5. Հայաստանեաց Եկեղեցւոյ ներկայ պետը։ — Քարոզախօսութիւնը՝ իբր գեղարուեստ, ինչպէս ուրիշ Քրիստոնեայ Եկեղեցիներու, նոյնպէս Հայ Եկեղեցին մէջ ալ մշակուած է անցեալին, բայց գարուն գեղարուեստական արդի պայմանները բոլորին նոր մշակութի մը կարիքը անհրաժեշտ կը դարձնեն։ Հայոց Եկեղեցւոյ բարեկարգութեան հարցը, միաժամանակ հարց

մըն է հասե Եկեղեցւոյ բեմի վերակենդա-  
նացման:

Հայց. Եկեղեցւոյ մէջ քարոզիսուռ-  
թեառ ներկայ գրութիւնը գժբախտաբար  
հետո է արդի պայմանները գոհացնելէ: Եւրոպական և ամերիկան լրմռնումով  
պատրաստուած քիչ քարոզիչներ ունինք:  
Այս իսկ պատճառու Եկեղեցիի բեմէն խօս-  
ուած քարոզներ յաճախ տափակ են, և ա-  
նոնց ընդհանուր չափանիշը տեղ տեղ Միջին  
դարու չափանիշէն ալ վար կը թայ:

Բայց միւս կողմէն արդար ըլլալու հա-  
մար հարկ է ըսել որ ժողովուրդին մէջ ալ  
պէտք եղած չափով մշակուած չէ բարձր  
քարոզներու հոգեւոր արժէքը զնահատելու  
կարողութիւնը, և հետեւաբար բեմէն խօս-  
ուած ամէն ինչ քարոզ կը համարուի: Ա-  
սիկա ինքնին պատճառ մը կը գառնայ որ  
քարոզիչներն ալ փորձուին բեմէն իրենց  
խօսած ամէն բան քարոզ նկատելու ներքին  
գոհունակութիւնը գգայու, և հետեւաբար  
որ ջանքեր չեն քափեր իրենց քարոզն-  
խօսելու մեթուար զարգացնելու: Իրակա-  
նութեան մէջ սակայն քարոզիսուռթիւնը  
նուրբ ու գժուարին արուեստ մըն է:

Օրուան պէտքին համեմատ նիւթ մը ըն-  
տրել, և զայն գիտական մեթուուղ և խնամ-  
քով ուսումնասիրել, դասաւորել, յառաջա-  
բանը, բաժանումները և վերջաբանը իրենց  
նպատակին ծառայեցնեով կարծուածին  
չափ դիւրին բան մըն ալ չէ: Ասիկա կը պա-  
հանչէ քարոզիչէն պատրաստութիւն, լուրջ  
աշխատանք, Աստուծոյ առջե ազօթքի, վե-  
րացումի և ներշնչման մասնաւոր պահեր:

Հայց. Եկեղեցւոյ քարոզիսուռթեան  
չափանիշը բարձրացնելու համար օգտակար  
է կարեւոր կերպուններու մէջ այս մասին Եկե-  
ղեցականներուն համար դասընթացքներու  
շարք մը բանալ, տարուան որոշ եղանա-  
կին, և կամ ամսուան ընթացքին, ինչ-  
պէս սովորութիւն է Ամերիկայի մէջ:

Օտար լեզուներէ քարոզիսուռթեան  
նիւղին չուրջ գիրքեր թարգմանել և տալ  
Եւրոպական լեզու չգիտացող մեր Եկեղեցա-  
կաններուն ձեռքը նոյնպէս ունի իր օգտա-  
կարութիւնը այս ուղղութեամբ:

Առնուելիք ուրիշ կարեւոր քայլ մըն է  
Հայց. Եկեղեցւոյ քարոզիսուռթեան պատ-  
ութիւնը գրել, և որով հայ մեծ քարո-  
չիչներուն կեանքը, գործ և քարոզախօ-

սելու կերպերը և մեթուուները, արդի լոյսով  
ժանօթացներ մեր նորավարժ Եկեղեցական-  
ներուն: Ասիկա կարեւոր պակաս մըն է մեր  
կրօնական գրականութեան մէջ:

Հայտատանեայց Եկեղեցին անցեալի մէջ  
ունեցած է կարոզ քարոզիչներ, որոնց քա-  
րոզախօսելու մեթուուներու նկատմամբ շատ  
քիչ բան գիտենք: Օտար լեզուներու մէջ  
շատ են քարոզախօսելու արուեստին չուրջ  
գրուած կարեւոր հեղինակութիւններ, ընդ-  
հանուր Եկեղեցւոյ քարոզիսուռթեան պատ-  
ութիւնը, քարոզիչներու քարոզ պատ-  
րաստելու գործին մէջ առաջնորդողի գեր  
կատարող մասնաւոր հրատարակութիւններ,  
և քարոզին նիւթը վերլուծող, մենող,  
բացատրող, և ասկէ առօրեայ կեանքի հա-  
մար գործնական դասեր հանող գիրքեր:  
Եւրոպական լեզու չգիտացող մեր ներկայ  
Եկեղեցականները դժբախտաբար զրկուած  
են օգտուելէ անոնցմէ:

Եկեղեցւոյ բեմին մակարդակը բարձ-  
րացնել սերտ աղերս ունի պատրաստուած  
քարոզիչներ ունենաւու կենական հարցին  
հետո: Եթէ մեր արդի Եկեղեցականները իս-  
կապէս պատրաստուած ըլլային ամրողջու-  
թեամբ իրենց գործին համար, քարոզչա-  
կան պաշտօնին չափանիշը բարձրացնելու  
խնդիրը ինքնին արդէն կը լուծուէր:

Ասկէ երկու գար առաջ, Անգլիոյ մէջ,  
Եկեղեցւոյ բեմը իջած էր իր բարձրութե-  
նէն, Եկեղեցականներ բեմին վրայ կը խօ-  
սէին այն նիւթերու մասին, որոնք ժողո-  
վուրդին հաճոյք կը պատճառէին, և յա-  
ճամի թագավորներու ու լորտերու անուն-  
ներուն չուրջ ներդոններ ալ կը հիւսէին,  
պարզագէս անոնց հաճելի երեւանու հա-  
մար: Բայց յետոյ չնորհիւ սաեղծուած կրօ-  
նական նոր շարժումներու, և վերածու-  
թեան շրջանի, սկսան հրապարակ գալ ձան  
Ռէզըլի, Հուայթֆիլտի, Բօպերթ Հօլի,  
Զալմըրոսի նման, և աւելի վերջը Սրբընքնի  
պէս կարոզ քարոզիչներ, որոնք բարձրա-  
ցուցին բեմին չափանիշը, և որով Եկեղե-  
ցին պահեց իր համար ժողովուրդին առջե:

Մենք Հայերս ալ պէտք ունինք այսօր  
Եկեղեցական վերածունողի, և արդի պայ-  
մաններուն համեմատ կրօնական շինչի նոր  
Եկեղեցական վերածունողի մը: Այս Եկեղեցական վերա-  
ծունողի շարժումները սակայն, պատրաստուած  
քարոզիչներն են որ պիտի սկսին մեր մէջ:

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՀԱՄՄՈՒՐԱՊԻԻ ՕՐԻՆԱԳԻՐՔԸ

144. Եթէ մէկը նուիրագործուած կի՞ն մը առած է, և այդ նուիրագործուած կի՞նը, իր ամուսնոյն ստրկուհի<sup>(37)</sup> մը տուած է, և (անոր) զաւակներ հայթաթած է, (եթէ) այդ անձը սրոշած է ամուսնանալ նուիրաշգործուած հարճի մը հետ, պիտի չթոյլատրեն (ատիկա) անոր այդ անձին. թոյլատրուած չէ իրեն ամուսնանալ, նուիրագործեալ հարճի մը հետ:

(37) Ցիցել՝ ամուսնարայի պարագան, որ ըրբեծնութեան համար Արքահաման տուաւ, իր եղիպատացի աղախութեան Աքարութեան ծննդ. թջ. 1-4։ Եւ Սարա կին Արքաման ոչ ծնաներ նմա, և էր նորա աղջիկ մի եղիպատացի որոյ անուն էր Ապար, եւ առաջ Սլերամ թրէկին բանանացաց, որովհետեւ արգի զիս թէր ի ծնաներոյ, արդ մուտա ապջիկ իմ զիս ապրից ինձ որդի ի գմանէ։ Եւ առնդիր եղի Արքամ ձայնի Սարայի, Եւ ա՛ Սարա կին Արքամ զիս եղիպատացի զաղախին իրու, յետ տասն ամի բնակիլյ Արքաման յերկիր Բանանացաց, և ետ զնս Արքամ առան իւրում կնութեան, և ետ մուտա առ Ազգար, և յլացաւ, իրեւ ետք թէ յիլ առանարկեցաւ տիկինն իւր լայս նորայի Յակոբի պատիմի՛ Բալլայի մօս ալ, վերոյիշեալ գեւպերու կը կնութիւն ուշացարս երեւայթ մը կը պարզէ, ծնն. լ. 2-6։ Յարկացաց Յաւել՝ այս լայս և ասէ ցնա. Միթէ փօխանակ Աստուծոյ իցի ծննդ ես, որ արգի զպուու որպայնի քայ։ Եւ ասէ Խաքէ՛լ ցծակոր, Եւ անձիկ աղախութիւն իմ թալ՛ւմ, մուտա առա, և ծննդի ի վերց ծնկաց իմց, և արքից և ես որդին ի նմանէ, Եւ ես նմա զալի՛լս զաղախին իրը կնութեան, մօւսւ առ ան Յակոր, և յլացաւ Բալլ'լս նախշան առաքել'այ, և ծնառ որդի Յակորայ, Եւ ասէ Խաքէ՛լ, իրաւ պարի իւստուած, և լուաւ ձայնի իմւում, և ետ ինձ որդի։ Եւ ննդոցից պատմամերուն հանգիառածիւմ, Սիջագէտան վերոյիշեալ օրէնքին հետ, այս առաջիններուն պատմականութիւնն ի խոր հոռժիւնը կը վաւերացնէ, սրոշապէս։

Անցեալի մէջ ժողովուրդը կը գոհանար ծէս և արարողութիւններով, իսկ այժմ կենդանի թեմը և կամ կենդանի խօսքն է որ կրնայ կապիլ ժողովուրդը Նեկեղեցիին հետ։ Այլապէս չենք կրնար Եկեղեցին պահել իր հմայիլ ու կինսատու գերին մէջ արդի պայմաններուն ու պահանջներու համեմատ։  
(Վերը՝ 3)

ԳՐ. Ա. ՍԱՐԱՖԵԱՆ

145. Եթէ մէկը նուիրագործուած կի՞ն մը առած է, և (եթէ) իրեն զաւակներ չէ հայթայթած, և (եթէ) նուիրագործուած հարճի մը հետ որոշած է ամուսնանալ, այդ անձը կրնայ առնել նուիրագործուած հարճ մը և զայն իր տունը մտցնել. (սակայն) նուիրագործուած հարճը, նուիրագործուած կնոյն հետ, հաւասար պիտի չգալասուիր։

146. Եթէ մէկը նուիրագործուած կի՞ն մը առած է, և (ասիկա) իր ամուսնոյն ստրկուհի մը առած է, և զաւակներ ծնած է (ստրկուհին), (եթէ) վերջը այդ ստրկուհին, քանի որ զաւակներ ծնած է, ինքը զինքը հաւասար դասած է իր տիրոււոյն հետ. իր տիրուցին, զայն գրամի փսխարէն պիտի չտայ, ստրկուի նշանը պիտի զնէ անոր վրայ, և պիտի գասէ զայն, ստրկուհինքու շարքին։

147. Եթէ զաւակներ չէ ծնած, իր տիրուկին պիտի զայն գրամի փսխարէն տայ։

148. Եթէ մէկը կին մը առած է, և (եթէ) չարագուշաց զի իւրմ մը բռնած է զայն, (եթէ այդ անձը) սրոշած է ուրիշ մը առնել, պիտի առնէ, իր կինը որուն չարագուշաց զի իւրմ մը բռնեց, (այդ անձը) պիտի չլիք զայն. տան մէջ որ հիմնած է, պիտի բնակի ան, և որքան ատեն որ ապրի, պիտի շարունակէ զայն պահել։

#### ՔԱՍԱՀԻՆԳԵՐՈՐԴ ՍԻՒՆԱԿ (Խակակողմ 9)

149. Եթէ այդ կինը չի հաւանի իր ամուսնոյն տան մէջ բնակիլ, իր օժիւը որ բերաւ իր հօր տունէն, պիտի վերադարձն (իր ամուսինը) իրեն ամբողջապէս, և պիտի հոռանայ։

150. Եթէ մէկը իր կինը, դաշտ մը, պարտէզ մը, տուն մը կամ շարժագոյքինչք նուիրած է անոր, (և) իրեն կիքագիր մը խմբագրած է, իր ամուսնոյն (մաւէն) վերջ, իր (կնոյն) զաւակները (այդ ինչ քերուն նկատմամբ) պահանջ չին կրնայ ներկայացնել իրեն, մայրը պիտի տայ իւ ժառանգութիւնը իր այն զաւկին, որ կը (նախա)սիրէ. ուրիշ ոչ մէկու պիտի չտայ։

151. Եթէ կին մը, որ կ'ապրի մէկու մը տան մէջ, որպէսզի իր ամուսնոյն պահանջատիւնները կինքը չի բռնեն, պարտաւորած է իր ամուսինը ըստ գտանց, վաւերագիր մը խմբագրել տուած է (անոր), եթէ այդ մարդը, այդ կինը առնելէն առ